

Յարգելի գործընկերներ

Ձեր ղեկավարած կազմակերպությունների և “Գնումների աջակցման կենտրոն” ՊՈԱԿ-ի միջև կնքված շրջանակային համաձայնագրերի շրջանակներում “Գավառի պետական համալսարան” ՊՈԱԿ-ի 2013թ.-ի կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով «ԳՊՅ-ՇՅԱՇՁԲ-13/08» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին խնդրում ենք ներկայացնել գնային առաջարկներ:

Գնային առաջարկներ պարունակող ծրարների ներկայացման և հայտերի բացման ժամկետ է սահմանվում 2013թ.-ի սեպտեմբերի 17-ը, ժամը 14:30, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Յրանտ Յակոբյան 1 հասցեում (փոստային դասիչ՝ 1201):

Կից ներկայացնում ենք ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

“Գավառի պետական համալսարան” ՊՈԱԿ

Դ Ի Մ ՈՒ Մ

Գնման ընթացակարգին մասնակցելու

_____ հայտնում է, որ ցանկություսն ուսի մասնակցելու «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2013թ.-ի համար «ԳՊՀ-ԸՅ ԱԾՁԲ-13/08» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի բոլոր չափաբաժնիներին և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ`

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համառոտ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ <<_____>>:

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____ (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 2013 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Գ ն ի առ աջ ար կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ԳՊՀ-ՇՀ ԱՇՁԲ-13/08» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,
 _____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.
 դրամ)

(ՀՀ

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեքի հաշվարկ			Առաջարկված գինը /տուերով և թվերով/
		Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ-ն*	
1	2	3	4	5	6=3+4+5
1.	Ուսումնական պարապմունքների մատյան				
2.	Ուսումնական պարապմունքների մատյան				
3.	Ուսանողական տոմս				
4.	Ստուգման գրքույկ				
5.	Ծառայությունների մատուցման գիրք				
6.	Դրամարկղային մուտքի օրդեր				

***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապստյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության սեփական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:**

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրողը)

Կ. Տ.

_____ 20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

<< Գավառի պետական համալսարան >> ՊՈԱԿ-ն , ի դեմս ռեկտոր Ռ. Խ. Զակոբյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և -----ն, ի դեմս Ընկերության տնօրեն -----ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք:

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Զրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված

ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրամախն նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՃԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրամի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Աշխատանքի կատարման ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրամի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊՅՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է _____

(_____ տարեքով _____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1** Պայմանագրի գնից`----- (-----) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար

նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2013թ. դեկտեմբերի 25-ը:

*** Կիրառվում է, եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար:*

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման` սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք` սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ` կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՅԱՆՔԱՆՎԵԼԻ ՈՒԺԻ ԱՇԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն և այլ տարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության

պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությանը՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանասույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությանը՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ.

2) Կատարողն է պատասխանատվություն և կրում գործակալի պարտավորությունների համար:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պառչած կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագիրը կնքվում ընդհանուր՝ _____ ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Աշխատանքի մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

11. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գ Լ Ո Ր Դ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«Գավառի պետական համալսարան»

ՊՈԱԿ

ՀՀ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1

«Անելիք բանկ» ՓԲԸ Պայ ազատմ/ճ

ՀՀ 118061043626

ՀՎՀՀ 08402753

Ռեկտոր

Ռ. Խ. Հակոբյան

տնօրեն

Կ.Տ

ստորագրություն

Կ.Տ

ստորագրություն

Հավելված N 1

N «ԳՊՐ-ՇՀՍՇՁԲ-13/08» գնման պայմանագրի

Տեխնիկական բնութագիր

«Գալառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար ուսումնական պարապմունքների մատյանների, ուսանողական տոմսերի, ստուգման գրքույկների և ծառայությունների մատուցման գրքերի տպագրական աշխատանքների ձեռքբերման.

Չախփած լի համարը	Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի որակական տվյալները *
1.	Ուսումնական պարապմունքների մատյան	<p>A 4 ֆորմատի սպիտակ օֆսեթ թուղթ 75գր/քմ, 2 ծալվող անվանացանկով, նախատեսված 35 անունների համար, (140x297մմ), 180 էջ ակալում, երկկողմանի տպագրություն, նշումներ ձախեջին՝ ուսանողների հաշվառման մասին, իսկ աջ կողմում՝ դասընթացի մասին գրանցումների համար:</p> <p>Կազմարարությունը՝ թելակար, շերմասոսնձված, կողքից բուժվինիլով ամրացված:</p> <p>Կազմի թուղթը՝ սպիտակ, չճկվող սովորաբարից:</p> <p>Մատյանի օրինակելի ձևը Պատվիրատու և կտրամադրի Կապալ առուին պայմանագիրն ու ժիմեջ մտնելուց հետո 1/մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում</p>
2.	Ուսումնական պարապմունքների մատյան	<p>A 5 ֆորմատի սպիտակ օֆսեթ թուղթ 75գր/քմ, անվանացանկով, նախատեսված 20 անունների համար (100x140մմ), 80 էջ ակալում, երկկողմանի տպագրություն, նշումներ ձախեջին՝ ուսանողների հաշվառման մասին, իսկ աջ կողմում՝ դասընթացի մասին գրանցումների համար:</p> <p>Կազմարարությունը՝ թելակար, շերմասոսնձված, կողքից բուժվինիլով ամրացված:</p> <p>Կազմի թուղթը՝ սպիտակ, չճկվող սովորաբարից:</p> <p>Մատյանի օրինակելի ձևը Պատվիրատու և կտրամադրի Կապալ առուին պայմանագիրն ու ժիմեջ մտնելուց հետո 1/մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում</p>
3.	Ուսանողական տոմս	<p>Երկփեղկ գրքույկ 95 x 65մմ չափսի, ձախեջին՝ ուսանողի տվյալները, իսկ աջ էջին՝ ուսումնական տարին:</p> <p>Կազմի վրա դաշման մեթոդով գրված է ինի՝՝ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏՈՄՍ՝՝ բառերը Կազմը՝ սովորաբարից, դիմային կողմից ամբողջությամբ բուժվինիլով ամրացված</p> <p>Տոմսի օրինակելի ձևը Պատվիրատու և կտրամադրի Կապալ առուին պայմանագիրն ու ժիմեջ մտնելուց հետո 1/մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում</p>
4.	Ստուգման գրքույկ	<p>Երկփեղկ գրքույկ, թուղթը 135 x 95մմ չափսի, 34 էջ համարակալված թուղթը՝ օֆսեթ, 75գր/քմ</p> <p>Կազմի վրա դաշման մեթոդով գրված է ինի՝՝ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐՔՈՒԅԿ՝՝ բառերը Կազմարարությունը՝ թելակար կամ մետաղակար,</p> <p>Կազմը՝ սովորաբարից դիմային կողմից ամբողջությամբ բուժվինիլով ամրացված</p> <p>Գրքույկի օրինակելի ձևը Պատվիրատու և կտրամադրի Կապալ առուին պայմանագիրն ու ժիմեջ մտնելուց հետո 1/մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում</p>
5.	Ծառայությունների մատուցման գիրք	<p>A 4 ֆորմատի սպիտակ օֆսեթ թուղթ 80գր/քմ, սպիտակությունը ոչ պակաս 90%, երկկողմանի տպագրություն 50 թերթ, թղթի ուղվածությունը "landscape":</p> <p>Կազմը սպիտակ, կալճ ապատ՝ 300գր/քմ, կողքից բուժվինիլով ամրացված, շերմասոսնձված:</p>
6.	Դրամարկղային մուտքի օրդեր	<p>A 5 ֆորմատի սպիտակ օֆսեթ թուղթ 75գր/քմ, ԶԶ Կառավարության կողմից սահմանված ձևով</p>

* Պարտադիր պայման՝ ապրանքը պետք է լինի չօգտագործված:

Պատվիրատու

Կատարող

(ստորագրություն)

Կ.Տ

(ստորագրություն)

Կ.Տ

Ձեռքբերում

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒ ՅՑ

ՀՀ դրամ

Հ / Հ	Գնման առարկայի			Նախատեսվում է գնել 20 թ.								Ընդամենը		
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I Եռամսյակ		II Եռամսյակ		III Եռամսյակ		IV Եռամսյակ				
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	
1.	Ուսումնական պարապմունքների մատյան	հատ						85					85	
2.	Ուսումնական պարապմունքների մատյան	հատ						30					30	
3.	Ուսանողական տոմս	հատ						400					400	
4.	Ստուգման գրքույկ	հատ						400					400	
5.	Ծառայությունների մատուցման գիրք	հատ						5					5	
6.	Դրամարկղային մուտքի օրդեր	հատ						400					400	
Ընդամենը				X		X		X		X		X		

ԳՆՈՐԴ

ՎԱՏԱՌՂ

/ստորագրող ուն/

Կ.Տ

/ստորագրող ուն/

Կ.Տ

Հավելված N 3

Ձեռագրում

Վճարման ժամանակացույց*

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 20 թ. ըստամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Ուսումնական պարագումունքների մատյան									100 %	100 %	100 %	100 %	100 %
2.	Ուսումնական պարագումունքների մատյան									100 %	100 %	100 %	100 %	100 %
3.	Ուսանողական տոմս									100 %	100 %	100 %	100 %	100 %
4.	Ստուգման գրքույկ									100 %	100 %	100 %	100 %	100 %
5.	Ծառայությունների մատուցման գիրք									100 %	100 %	100 %	100 %	100 %
6.	Դրամարկղային մուտքի օրդեր									100 %	100 %	100 %	100 %	100 %

* Վճարման ենթակագումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՊՈՐ

/ստորագրող ուն/

/ստորագրող ուն/

Կ.Տ

Կ.Տ

Հավելված 4

«_____» «_____» 20 թ.

կնքված N _____ ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող

Պատվիրատու

գտնվել ու վայրը _____
հ հ _____
հվհ հ _____

գտնվել ու վայրը _____
հ հ _____
հվհ հ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՆԱՆ**

<< _____ >> << _____ >> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ << _____ >> << _____ >> 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Կատարողը՝ ի դեմս _____,

հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությանը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը _____ 20__թ-ից _____ 20__թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	ան առարկայի անակակն ու ցանիչը	աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա դրամարը (դրամ)	ճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքը ընդունեց

ստորագրող թյուն

ստորագրող թյուն

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ
ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N**

թ. _____ 2013 թ.

-----ն, ի դեմս Ընկերության տնօրեն -----, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ (Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1. Հաշվի առնելով, որ Ընկերությունը հաղթող է ճանաչվել «Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված տպագրական աշխատանքներ ձեռքբերելու նպատակով հայտարարված «ԳՊՐ-ՇՅԱՇՁԲ-13/08» ծածկագրով շրջանակային համաձայնագրվ գնման ընթացակարգի կիրարկման արդյունքում, պայմանագրի կնքման համար պետք է ներկայացնի պայմանագրի ապահովում և ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակի և ամբողջ ծավալով պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1. Պատվիրատուի կողմից կազմակերպված N «ԳՊՐ-ՇՅԱՇՁԲ-13/08» ծածկագրով շրջանակային համաձայնագրվ գնման ընթացակարգի կիրարկման արդյունքում կնքվելիք «Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար տպագրական աշխատանքների գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ (պայմանագրի գնի 5%-10%)՝ _____ (_____ →) ՀՀ դրամի չափով:

1.1.2. Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1. կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3. Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1. կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող _____ կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով Ընկերությունը հանձնարարում է _____-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում Պատվիրատուի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 2013 թվականի _____-ը ներառյալ :

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները.

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

Ընկերությունը _____

Հասցեն _____

բանկ _____

Հ/Հ _____

ՀՎՀՀ _____

Տնօրեն _____

/անուն, ազգանուն/

/ստորագրություն/

Գլխ. հաշվապահ _____

/անուն, ազգանուն/

/ստորագրություն